



## ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### ***Ընկերության հանձնառությունը***

Լիդիան Ինթերնեյշնլ ընկերությունը (այսուհետ՝ «Լիդիան») նպատակ ունի լինել հաճախորդների, աշխատակիցների և բաժնետերերի համար ամենանախընտրելի ընկերությունը, ինչպես նաև դառնալ հարգված առաջատար հանքարդյունաբերության ոլորտում: Լիդիանի առաքելությունն է շահագործումն ու աշխատանքներն իրականացնել կայուն և հավասարակշռված ձևով: Ընկերությունը գիտակցում է, որ աշխատակիցները տնտեսական գործունեության ռազմավարությունն ապահովելու համար հիմնական ռեսուրսն են հանդիսանում: Լիդիանը հավատում է, որ առաջատարի այն նույն որակները, որոնք ապահովում են առողջ և հուսալի սոցիալական, բնապահպանական, առողջության և անվտանգության, ինչպես նաև մարդկային ռեսուրսների քաղաքականություն, դրանք այն որակներն են, որոնք ընկերությունը դարձնում են աշխատունակ և շահավետ:

### ***Լիդիան ընկերության՝ մարդկային ռեսուրսների քաղաքականություն***

Լիդիան ընկերությունը համոզված է, որ իր աշխատակիցները հանդիսանում են կարևոր ռեսուրս աջակցելու այն կանխատեսումներին, որ ընկերությունը լինի հարգված և հաջողակ թանկարժեք մետաղների հանքավայր շահագործող: Լիդիանը թիմային աշխատանքի, միասնության, ազնվության, հարգանքի և վստահության իր արժեքները կներդնի Մարդկային ռեսուրսների քաղաքականության իրականացման գործում:

Լիդիանը ձգտում է լինել լավ հարևան այն համայնքների համար, որտեղ նա գործունեություն է ծավալել: Ընկերությունը կայուն զարգացման պարտավորություն է ստանձնել, ինչը առավելագույնի կհասցնի այն համայնքների և երկրների օգուտները, որտեղ նա գործունեություն է իրականացնում: Սա իրականացվում է համայնքաբնակ հավակնորդների համար վերապատրաստման դասընթացների կազմակերպմամբ: Աշխատակիցները կընտրվեն՝ հաշվի առնելով նրանց աշխատանքային ունակությունները, մասնագիտական վարքը և էթիկան, ինչպես նաև անվտանգության՝ իրենց մոտեցումները: Ընկերության կադրային քաղաքականությունը առաջնային կարևորություն է տալիս տարածաշրջանում աշխատանքային ռեսուրսների զարգացմանը՝ սկսած Ծրագրի ազդակիր տարածքներից մինչև շրջակա գյուղերն ու քաղաքները:

Լիդիան ընկերությունը պաշտպանում է մարդու իրավունքները՝ ՄԱԿ-ի մարդու իրավունքների հռչակագրերի համաձայն:

### ***Նպատակները***

Լիդիան ընկերության ղեկավար սկզբունքներն ու աշխատանքի ընդունման նպատակները հետևյալն են՝

- Աշխատողների նկատմամբ արդարացի վերաբերմունքի, խտրականության արգելման և հավասար հնարավորությունների ապահովում՝ անկախ սեռից, ռասայից, ազգությունից, կրոնից կամ հաշմանդամությունից:
- Մարդկային ռեսուրսներին առնչվող քաղաքականություններն ու ընթացակարգերն իրականացնել արդար, բաց և թափանցիկ:
- Արժանիքների վրա հիմնված զարգացում՝ ուշադրությունը կենտրոնացնելով տեխնիկական հնարավորությունների և աշխատանքային կարգապահության վրա:
- Անկողմնակալության ապահովում՝ Ծրագրի ազդակիր տարածքում աշխատակիցներին արտոնությունների տրամադրում:
- Խրախուսել թիմային աշխատանքն ու ավելացնել լիազորությունները, որը աշխատակիցներին հնարավորություն կտա աշխատել՝ օգտագործելով իրենց առավելագույն հնարավորությունները:
- Կիրառել ցուցաբերած լավագույն աշխատանքի և արդյունքի համար պարգևատրման սկզբունքը:

- Զբաղվածության և աշխատանքի վերաբերյալ ազգային օրենքների պահպանման ապահովում
- Պաշտպանել աշխատողներին, այդ թվում աշխատողների խոցելի կատեգորիաներին, ինչպիսիք են՝ աշխատանքային միգրանտները և երրորդ անձանց կողմից ներգրավված աշխատողները:
- Երբեք թույլ չտալ օգտագործել հարկադիր և պարտքի դիմաց աշխատանք, ինչպես նաև մանկական աշխատուժ:

«Գործընթաց, որտեղ հաշվի են առնվում ներկայիս պահանջները՝ չգրկելով գալիք սերունդներին իրենց պահանջները բավարարելու հնարավորությունից:»

### ***Համապատասխանություն***

Լիդիան ընկերությունն կպահպանի աշխատանքի ընդունման ու մարդկային ռեսուրսների հետ կապված Հայաստանի համապատասխան օրենսդրության պահանջները: Ընկերության անձնակազմի հավաքագրման պլանը համահունչ կլինի աշխատողների հավաքագրման և վարձման վերաբերյալ տեղական աշխատանքային օրենսգրքին: Լիդիանը նաև հետամուտ կլինի Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի և Զարգացման և Վերակառուցման Եվրոպական Բանկի, ինչպես նաև Աշխատանքի միջազգային կազմակերպության և ՄԱԿ-ի ուղեցույցներին:

Մարդկային ռեսուրսների սույն քաղաքականությունը տարածվում է անմիջապես Լիդիանի կողմից վարձվող աշխատողների, ինչպես նաև այն աշխատողների վրա, որոնք երկարաժամկետ ներգրավվել են երրորդ անձանց կողմից Ընկերության հիմնական գործունեության հետ կապված աշխատանքներն իրականացնելու նպատակով (պայմանագրային աշխատողներ): Քաղաքականությունը տարածվում է նաև Լիդիանի առաջնային մատակարարների կողմից վարձվող աշխատողների (մատակարարման ցանցի աշխատակիցներ) վրա:

### ***Շարունակական բարելավում***

Ընկերությունը պարբերաբար կվերանայի մարդկային ռեսուրսների իր քաղաքականությունը և անհրաժեշտության դեպքում այն կթարմացվի: Սույն քաղաքականությունը կիրականացվի Ընկերության բնապահպանական, սոցիալական, առողջության և անվտանգության կառավարման միասնական համակարգի միջոցով, որ պարբերաբար կվերանայվի և կթարմացվի՝ պարբերական, համակարգված, ներքին աուդիտի միջոցով: Այն աուդիտի արդյունքները կօգտագործի որպես հիմք՝ ավելի ձկուն կառավարման գործընթացի միջոցով շարունակական բարելավման համար:

### ***Ընկերության գործելակերպը***

Արդյունավետ կառավարումը պահանջում է, որ աշխատակիցներն իմանան աշխատանքային պարտականությունները, թե որքան լավ են նրանք աշխատում և ինչ է նրանց անհրաժեշտ սովորել՝ աշխատանքն ավելի որակով կատարելու համար: Այս ամենին հասնելու համար Ընկերությունը աշխատանքային հստակ առաջադրանքներ և ակնկալվող արդյունքներ կսահմանի՝ պաշտոնեական պարտականություններից ելնելով, որոնք ներառում են աշխատանքային էթիկայի, վարվեցողության կանոնագրքի և ազնվության չափանիշների վերաբերյալ Լիդիանի կողմից ակնկալվող արդյունքները: Մենք կապահովենք, որ աշխատակիցներն իրենց աշխատանքի արդյունավետության մասին պատասխան արձագանք ստանան, կվճակենք անհատական զարգացման պլաններ՝ անհատական վարքն ավելի արդյունավետ դարձնելու և Ընկերության աշխատանքի որակը բարձրացնելու նպատակով:

Լիդիան ընկերությունն աշխատակիցներին կտրամադրի փաստաթղթերով հաստատված՝ պարզ և հասկանալի տեղեկություններ իրենց աշխատանքի և զբաղվածության մասին ազգային օրենքների և կիրառվող կոլեկտիվ աշխատանքային պայմանագրերի համաձայն՝ իրենց իրավունքների վերաբերյալ, այդ թվում՝ աշխատանքային ժամերի, աշխատավարձերի, արտաժամյա աշխատանքի, փոխհատուցման և նպաստների վերաբերյալ իրենց իրավունքները: Ցանկացած նյութերի փոփոխության դեպքում՝ դրանք կարող են թարմացվել:

Ընկերությունը կերաշխավորի, որ աշխատակիցներն ունենան իրենց առաջադրանքներն արդյունավետորեն և օպերատիվ իրականացնելու համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ: Լիդիանը ուսուցողական, վերապատրաստման և զարգացման գործողություններ կնախատեսի՝ աշխատակիցների մասնագիտական որակը և կազմակերպության աշխատանքի արդյունավետությունը բարելավելու նպատակով: Դրանք ներառելու են բազմաթիվ մոտեցումներ, այդ թվում՝ կառուցվածքային վերապատրաստման դասընթացներ, դաստիարակչական, անհատական պարապունքներ, մասնագետների աշխատանքին հետևում, փորձի փոխանակում և/կամ ինքնուրույն ուսումնասիրում:

Ընկերությունը ձգտելու է հավաքագրել նպատակալաց, մոտիվացված և որակյալ աշխատողներ, որոնք կօգնեն Ընկերությանը հասնել իր նպատակներին: Ընկերությունը մշակելու է մարդկային ռեսուրսների պլան, որը նկարագրում է, թե ինչպես ենք մենք կատարելու կազմակերպության ռազմավարական ծրագրերի վրա հիմնված մարդկային ռեսուրսների ներկայիս և հետագա պահանջները:

### ***Աշխատանքի հիգիենա և անվտանգություն***

Լիդիան ընկերությունը պարտավորվում է իրականացնել աշխատանքի հիգիենայի և անվտանգության քաղաքականություն և երաշխավորել, որ այս քաղաքականությունը հայտնի դառնա ընկերության մենեջերներին, աշխատակիցներին, կապալառուներին և գործընկերներին, ինչպես նաև այն արդյունավետորեն իրականացվի, վերանայվի և թարմացվի: Մեզ համար մարդիկ գլխավոր արժեք են ներկայացնում և համոզված ենք, որ բոլոր դժբախտ պատահարներն էլ հնարավոր է կանխարգելել: Մենք ապահովելու ենք անվտանգ և առողջ աշխատանքային միջավայր՝ հաշվի առնելով հանքարդյունաբերությանը բնորոշ ռիսկերը, այդ թվում՝ ֆիզիկական, քիմիական և կենսաբանական վտանգները:

### ***Անխտրականություն և համահավասար հնարավորություններ***

Աշխատանքով ապահովման վերաբերյալ որոշումներ կայացնելիս Լիդիան ընկերությունը կառաջնորդվի միայն աշխատանքին վերաբերող ներքին պահանջներով: Աշխատանքի ընդունումը կիրականացվի համահավասար հնարավորությունների և արդարացի վերաբերմունքի սկզբունքներից ելնելով, ինչպես նաև խտրականություն չի ցուցաբերվի աշխատանքային պայմանագրից բխող հարաբերությունների որևէ ասպեկտի հետ կապված, այդ թվում՝ հավաքագրում և վարձում, փոխհատուցում (ներառյալ աշխատավարձեր և նպաստներ), աշխատանքային պայմաններ և աշխատանքի ընդունման ժամկետներ, վերապատրաստման հնարավորություն, աշխատանքային առաջադրանք, առաջ քաշում, աշխատանքային պայմանագրի դադարեցում կամ պաշտոնաթող լինելը և կարգապահական մեթոդների կիրառում: Ընկերությունը միջոցներ կկիրառի կանխելու և պայքարելու հատկապես կանանց նկատմամբ նկրտումների, ահաբեկելու և/կամ շահագործման դեմ: Անխտրականության այս սկզբունքները վերաբերում են բոլոր աշխատողներին, այդ թվում՝ սեզոնային աշխատողներին:

### ***Հաստիքների կրճատում***

Այն դեպքում, երբ կպահանջվեն զանգվածային հեռացումներ, Ընկերությունը կակտարի հաստիքների կրճատումների այլընտրանքային տարբերակների ուսումնասիրություն: Որևէ արդյունավետ այլընտրանք չգտնելու դեպքում, Ընկերությունը կմշակի և կիրականացնի կրճատումների պլան՝ աշխատողների վրա կրճատումների բացասական ազդեցությունները նվազեցնելու նպատակով: Կրճատումների պլանը հիմնված կլինի անխտրականության սկզբունքի վրա և կարտացոլի աշխատողների, նրանց կազմակերպությունների և ընդերքի սեփականատեր՝ կառավարության հետ խորհրդակցությունները, ինչպես նաև կհամապատասխանի կոլեկտիվ պայմանագրերին, եթե դրանք առկա են:

### ***Գանձատարկման մեխանիզմ***

Աշխատավայրի հետ կապված խնդիրները բարձրաձայնելու նպատակով Լիդիան ընկերությունը կներկայացնի գանձատարկման մեխանիզմ աշխատողների (և նրանց կազմակերպությունների, եթե առկա են) համար: Աշխատանքի ընդունման ժամանակ աշխատողների կտեղեկացվի գազատարկման մեխանիզմի մասին, որը նրանց համար մատչելի կդարձվի: Մտահոգություններին անմիջապես լուծում տալու համար կկիրառվի հասկանալի և թափանցիկ գործընթաց՝ առանց որևէ հաշվեհարդարի: Այս մեխանիզմը թույլ կտա բարձրացնել և ներկայացնել անանուն բողոքներ՝ չխոչընդոտելով դատական պաշտպանության իրավական կամ վարչական միջոցներ օգտագործելու հնարավորությանը:

### ***Անձնակազմի պաշտպանությունը***

Լիդիան ընկերությունը չի օգտագործի որևէ հարկադիր աշխատանք, որը պարունակում է ոչ կամովին կատարված աշխատանք կամ ծառայություն, որը անհատից պահանջվել է կատարել ուժի կամ պատժի կիրառման սպառնալիքի տակ: Ընկերությունը աշխատանքի չի ընդունի առքուվաճառքի առարկա դարձած մարդկանց: Լիդիանն աշխատանքով կապահովի միայն այն անձանց, որոնք ընդունող երկրում աշխատելու օրինական իրավունք ունեն:

Ընկերությունը տնտեսապես հիմնավորված ջանքեր է գործադրելու՝ համոզվելու, որ պայմանագրային աշխատողներ վարձող երրորդ անձինք մեծ համբավ ունեցող օրինական ձեռնարկություններ են և համապատասխան համակարգեր ունեն երաշխավորելու, որ նրանք գործում են սույն Քաղաքականության պահանջներին համապատասխան:

### ***Աշխատողների կազմակերպություններ (միություններ)***

Լիդիան ընկերությունը ճանաչում է աշխատակիցների իրավունքները՝ կազմավորելու և իրենց ընտրությամբ միանալու աշխատողների ցանկացած միություններին՝ առանց միջամտելու նրանց, և որ նրանք կոլեկտիվ բանակցություններ վարելու իրավունք ունեն: Ընկերությունը աշխատողներին չի սահմանափակում աշխատանքային պայմանների, աշխատանքային պայմանագրի պայմանների հետ կապված իրենց բողոքներն արտահայտելու և իրենց իրավունքները պաշտպանելու մեխանիզմներ մշակելու հարցում: Ակնկալվում է, որ աշխատողների ցանկացած այսպիսի միությունները իսկապես ներկայացնում են աշխատանքային կոլեկտիվի աշխատողներին:

Սույն քաղաքականությունը Տնօրենների խորհրդի կողմից հաստատվել է 2016թ. օգոստոսի 17-ին: